ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

22.01.2014 թ գ. Արգինա

ՀՀ Արմավիրի մարզի Արգինա համայնքի ղեկավարի 2013 թ երկրորդ կիսամյակի աշխատանքային գործունեության վերաբերյալ.

Արգինա համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի հաշվետու ժողով
Ժողովին մասնակցում էին Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ներկայացուցիչ Համլետ Կուրղինյանը, ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ, գյուղապետարանի աշխատակիցներ:
Նախագահությամբ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանի
Քարտուղարությամբ՝ աշխտակազմի քարտուղար Ս. Հարությունյանի
Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավար Մ. Գրիգորյանը
Հարգելի հյուրեր, Արգինա համայնքի բնակիչներ.
Թույլ տվեք Ձեր ուշադրությունը հրավիրել իմ՝ համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի կողմից 2013թ երկրորդ կիսամյակում կատարած աշխատանքների մասին՝ ըստ համապատասխան բնագավառների
Սոցիալական բնագավառում՝
Հայաստանի Մանուկներ Բարեգործական Հիմնադրամի աջակցությամբ մանկապարտեզի տարածքում տեղադրվել է խաղահրապարակ, համայնքի կենտրոնում տեղադրվել է սպասարան, վերանորոգվել է մանկապարտեզի տանիքը, մանկապարտեզին հարող տարածքում ձեռք է բերվել տնկիներ և կատարվել են ծառատունկի աշխատանքներ:
Համայնքում պարբերաբար իրականացվում են աղբաթափության աշխատանքներ, մասնակի վերանորոգվել են համայնքի ներսի փողոցները:
Համայնքի մեկ ընտանիքի հատկացվել է 100.0 հազար դրամ միանվագ դրամական օգնություն՝ խոտի դեզի այրվելու կապակցությամբ:
Համայնքի սոցիալապես անապահով տասը ընտանիքների հատկացվել է միանվագ դրամական օգնություններ:
Մեծն Ներսես Բարեգործական հիմնադրամի օգնությամբ ձեռք են բերվել և համայնքի դպրոցականներին ինչպես նաև մի շարք ընտանիքների բաժանվել են ռետինե հողաթափեր և ձմեռային տաք կոշիկներ:
Կազմակերպվել և անցկացվել են անկախության օրվան, ինչպես նաև ամանորին նվիրված միջոցառումներ:Ամանորի միջոցառման ժամանակ համայնքի ութսունից ավելի մանկահասակ երեխաների բաժանվել են ամանորյա նվերներ:
Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել և անցկացվել է ավագանու հինգ նիստեր, որոնց ընթացքում քննարկվել են համայնքին հուզող բազմաբնույթ հարցեր,ընդունվել են որոշումներ և հետամուտ եղել դրանց կատարմանը:
2013 թվականի երկրորդ կիսամյակում բյուջեի կատարողականը կազմում է

1. հողի հարկ 4213.27 հազար դրամ, կամ 69.78 % , գույքահարկ 368.34 հազար դրամ կամ 86.82 %, հողի վարձավճար՝ 872.80 հազար դրամ կամ 100.0% տեղական տուրք՝ 76.6 հազար դրամ՝ կամ 100.0%:
Արմավիրի մարզպետարան , ինչպես նաև տարբեր կազմակերպություններ են ուղարկվել ութսունից ավելի տարաբնույթ գրություններ , հաշվետվություններ:
Մարզպետարանի ֆինանսական բաժին, ինչպես նաև հարկային տեսչություն և սոցապ բաժիններ են ուղարկվել քսանից ավելի հաշվետվություններ, գրություններ:
Քաղաքացիներից ստացվել են քսանից ավելի տարբեր դիմումներ, որոնք ստացել են իրենց դրական պատասխանները, ինչպես նաև տրամադրվել են հարյուրքսանից ավելի տարբեր բնույթի տեղեկանքներ:
Համայնքի հիմնախնդիրներն են՝
Համայնքի թիվ մեկ խնդիր է գյուղի խմելաջրի, ոռոգման ջրի ներքին փակ ցանցերի անմխիթար վիճակը ,դրանք գտնվում են վթարային վիճակում, որի պատճառով մեծ են ջրի կորուստները, այդ իսկ պատճառով ենթակա են փոփոխման և վերանորոգման:
Համայնքը չունի մշակույթի տուն, գյուղապետարանի շենք, գազաֆիկացված չէ, փողոցները գտնվում են անբարեկարգ վիճակում, հաճախակի կարկտահարությունները մեծ վնասներ են պատճառում գյուղատնտեսական արտադրությանը:

Արգինա համայնքի ղեկավար Մ. Գրիգորյան